ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝
2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների **տարեկան**
հաշվետվության

2017 թվականի հունվարի 20 -ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2016 թվականի տարեկան հաշվետվությունը :

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Գ.Հովհաննիսյանը, Խորոնք համայնքի ավագանու անդամներ ՝ Նշան Ասատրյանը , Նորիկ Կարապետյանը , Էդգար Խաչատրյանը , Արման Գրիգորյանը,Արտակ Խաչատրյանը և Խորոնք համայնքի 62 բնակիչներ: Խորոնք համայնքի ղեկավար Սարգիս Նահապետյանն իր զեկույցով հանդես եկավ և մանրամասնորեն ներկայացրեց 2016 թվականի տարեկան հաշվետվությունը: Խորոնք համայնքի ավագանու անդամները և բնակիչները շնորհակալություն հայտնեցին գյուղապետին ինչպես 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների, այդ թվում՝ սեփական եկամուտների 112.5%-ով կատարողականի, այնպես էլ ընդհանուր բյուջեն 102.8%-ով կատարելու համար:

Ավագանու անդամ Նորիկ Կարապետյանն անդրադարձավ համայնքի բնակիչներին լիովին խմելու ջրով ապահովելու ,ինչպես նաև բնակավայրին (տնամերձներին) ոռոգման ջրով ապահովելու հիմնախնդիրների վերջնական լուծմանը :

Ի պատասխան ավագանու անդամ Նորիկ Կարապետյանի առաջադրած հիմնախնդրին ՝ համայնքի ղեկավար Ս. Նահապետյանը պարզորոշ բացատրեց, որ այդ հիմնախնդիրների լուծումներն ընթացքի մեջ են, և հավելեց, որ ընթացիկ տարվա ընթացքում այդ ուղղությամբ հստակ քայլեր կձեռնարկվեն :

Բնակիչներից մի քանիսի կողմից հարց բարձրացվեց պարարտանյութեր տրամադրելու վերաբերյալ: Հարցին պատասխանեց Գ.Հովհաննիսյանը: Ըստ նրա՝ պարարտանյութը ժողովրդին կհասնի ժամանակին և կբաշխվի ըստ հողակտորների չափաքանակի :

Ավագանու անդամ Նշան Ասատրյանը կրկին առաջ քաշեց միջնակարգ դպրոցում սպորտդահլիճի կառուցման հարցը: Գ.Հովհաննիսյանը պատասխանեց, որ հետամուտ կլինի հարցի լուծմանը և հարցը կբարձրացնի Արմավիրի մարզպետարանում:

Բնակիչների կողմից հարց առաջադրվեց նաև այն մասին ,որ կենտրոնական ճանապարհի հիմնովին ասֆալտապատումն ընդգրկվի ծրագրի մեջ : Գ.Հովհաննիսյանը պատասխանեց, որ եթե առաջիկայում այդպիսի ծրագիր նախատեսվի, համայնքն անպայման կընդգրկվի ծրագրում:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/

Արձանագրությունը կազմեց ՝

Աշխատակազմի քարտուղար՝ /Ա.Մինասյան /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն

- **Գործավարություն**

2016 թվականի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել են 91 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները:

Համայնքի բնակիչներին տրամադրվել են 783 տեղեկանքներ և 6 բնութագրեր:

Ուղարկվել են 196 պաշտոնական գրություններ մարզի ֆեդերալ կառույցների ղեկավարներին:

Համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 70 որոշում և արձակվել է 15 կարգադրություն:

- **Ավագանու գործունեություն**

2016 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 4 արտահերթ և 5 հերթական նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի խիստ հրատապ հարցերի քննարկման համար: Մասնավորապես կատարվել են բյուջեի փոփոխություններ և ազատ միջոցների բաշխում:

- **Գյուղատնտեսական ոլորտ**

Համայնքապետարանը աջակցել է գյուղացիական տնտեսություններին հողօգտագործման աշխատանքներում: Տարվա ընթացքում համայնքում առկա հողատարածքներն ունեն հետևյալ բաշխումը.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 525.20 հա
- բնակավայրային նշանակության հողեր՝ 142.43 հա
- վարելահողեր՝ 372.30 հա
- խաղողի այգիներ՝ 5.3 հա
- պտղատու այգիներ՝ 0.36 հա

Գյուղացիական տնտեսություններին տարվա ընթացքում տրամադրվել է 80 տոննա ազոտական, 5 տոննա ֆոսֆորական և 5 տոննա կալիումական պարարտանյութ:

2016 թվականի ընթացքում արտադրվել է և հանձնվել մարզպետարան հանվել 13.810 տոննա բանջարեղեն, 1720 տոննա ձմերուկ, 930 տոննա կարտոֆիլ, 284 տոննա հացահատիկ և շուրջ 97.9 տոննա խաղող:

Աշնանը համայնքում կատարվել է 62 հա աշնանացան հացահատիկի ցանքս :

Անասունների գլխաքանակը 01.01.2017 թվականի դրությամբ կազմում է՝

Խոշոր եղջերավոր անասուններ՝ 268 գլուխ, որից՝ կովեր՝՝ 80 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 35 գլուխ, որից մայրականը՝ 30 գլուխ, խոզերի գլխաքանակը կազմել է 324 գլուխ, որից մայրական կազմը՝ 68, մեղվաընտանիքներ՝ թվով 19:

- **Քաղաքաշինության բնագավառ**

Աջակցություն և վերահսկողություն է իրականացվել գյուղում բնակարանաշինության ոլորտում:

2016 թվականի ընթացքում տրվել է 1 շինարարության թույլտվություն: Վերանորոգվել է գերեզմանատան ջրագիծը, որի համար տրամադրվել է 400.000 դրամ գումար: Վերանորոգվել է մայրուղու երկարությամբ, ձգվող փողոցային լուսավորությունը, որի համար ծախսվել է 300.000 դրամ գումար:

Փոխվել է համայնքապետարանի շենքի 4 պատուհաններ և 1 դուռ : Այդ նպատակով հատկացվել է 510.000 դրամ գումար : Իսկ դահլիճի վերանորոգման աշխատանքների անհրաժեշտ նյութեր ձեռք բերելու համար ծախսվել է 250.000 դրամ գումար, պահանջվող աշխատանքների համար հատկացվել է 270.000 դրամ գումար ,գործադրման համար՝ 150.000 դրամ գումար :

- **Հողաշինություն և հողօգտագործման բնագավառ**

2016 թվականի ընթացքում կազմվել է ընթացիկ տարվա հողային հաշվեկշիռը և հանձնվել մարզպետարան:

Կատարվել են հողերի չափագրման աշխատանքներ:

Ընթացքի մեջ է նաև շուրջ 9 հա հողատարածքի վարձակալության հանձման գործընթացը:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ

Խորոնք - Գրիբոյեդով մայրուղու մայթեզրի, ինչպես նաև դեպի <<Զաքիր>>. <<Կաթնաղբյուր>> և << Ադաներ>> տանող դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքները կատարելու համար ծախսվել է 200.000 դրամ գումար:

Կատարվել են գյուղամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ, որոնց համար տրամադրվել է 797.000 դրամ գումար:Համայնքի կենտրոնական ճանապարհի կապիտալ վերանորոգման նպատակով հատկացվել է 990.000 դրամ գումար:

Համայնքում ևս 2 կանգառներում սպասատեղի կառուցելու համար հատկացվել է 600.000 դրամ գումար:

795.700 դրամ գումար է տրամադրվել համայնքում խմելու ջրի ջրագծերի անցկացման, անհրաժեշտ նյութերի ձեռքբերման և միացման աշխատանքների կատարման համար:

- **Աղբահանության բնագավառ**

Աղբահանության աշխատանքները գյուղում կատարվում են մշտապես և անխափան: Այդ աշխատանքների համար հատկացվել է 1.560.000 դրամ գումար: Աշխատանքները կատարվում են շաբաթական մեկ անգամ, աղբը կուտակվում է այդ նպատակի համար հատկացված վայրում:

- **Մշակույթի և սպորտի բնագավառ**

Գործում է ըմբշամարտի խմբակ: Գյուղապետարանը մեծ ուշադրություն է դարձնում միջնակարգ դպրոցի և մանկապարտեզի գործունեությանը միաժամանակ ցուցաբերելով իր աջակցությունը բոլոր հարցերում՝ մատաղ սերնդի կրթության և դաստիարակության զարգացման մակարդակն ավելի ամուր հիմքերի վրա պահելու մտայնությամբ:

300.000 դրամ գումար հատկացվել է Խորոնքի գյուղապետարանի , «Խորոնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ և «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության աշխատակցուհիներին կանանց միջազգային օրվա՝ Մարտի 8-ի կապակցությամբ նվերներ գնելու համար:

Վերջին դասի կապակցությամբ հատկացվել է 200.000 դրամ գումար և այդ գումարով թվով 15 շրջանավարտներին գնվել են նվերներ:

Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնին նվիրված միջոցառման կազմակերպման և հյուրասիրության նպատակով հատկացվել է 250.000 դրամ գումար: Հյուրասիրությանը մասնակցել են գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող կառույցների աշխատակիցներ և համայնքի բնակիչներ, Հայրենական պատերազմի 1 վետերանի տրամադրվել է ֆինանսական օգնություն :

Մայիսի 28-ին Սարդարապատի հերոսամարտի հաղթանակին նվիրված միջոցառման կազմակերպման համար տրամադրվել է 200.000 դրամ գումար:

հեքիաթի հերոսներ՝ երեխաներին ուրախ խաղերով ու երգերով զվարճացրել են և պարգևել տոնական տրամադրություն: Այդ նպատակի համար տրամադրվել է 100.000 դրամ գումար: Նոր տարվա կապակցությամբ 980.000 դրամ գումար է հատկացվել համայնքի 1-ից 10 տարեկան թվով 370 երեխաներին ամանորյա նվերներ գնելու համար:

- **Սոցիալական բնագավառ**

Համայնքապետարանի մշտական հոգածության և ուշադրության կենտրոնում են եղել հայրենական մեծ պատերազմի վետերանը , 2016 թվականի ապրիլյան մարտերին սահմանների պաշտպանության մասնակիցները , նպաստառուները և կենսաթոշակառուները:

2016 թվականի ընթացքում 3.500.000 դրամ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել , այդ թվում՝

1. հիվանդ և սոցիալապես անապահով 56 ընտանիքների տրամադրվել է 2.080.000 դրամ գումար,
2. նորածին երեխաներ ունեցող 30 ընտանիքների՝ հատկացվել է 900.000 դրամ
3. հայրենական պատերազմի վետերանի ընտանիքի՝ 20.000 դրամ գումար,
4. «Էջմիածնի ավտոդպրոց» ՍՊԸ-ում սովորող երեխաներին՝ 80.000 դրամ ,
5. ապրիլյան մարտերին մասնակցած համայնքի բնակիչներին տրամադրվել՝ 380.000 դրամ գումար,
6. Հունահռոմեական ըմբշամարտի Հայաստանի Հանրապետության չեմպիոն, աշխարհի պատանիների առաջնության բրոնզե մեդալակիր համայնքի բնակչին՝ 40.000 դրամ գումար :

- **Հողի հարկ և գույքահարկ**

2016 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 8.628.900 դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 100.0% :

2016 թվականի ընթացքում գույքահարկի գծով բյուջեի եկամուտների մասով գանձվել և համայնքի բյուջե է մուտքագրվել 5.096.200 (134.4%) դրամ գումար, որից՝ փոխադրամիջոցների գույքահարկ՝ 4.826.400 դրամ գումար (136.2%), շինությունների գույքահարկ՝ 270.000 դրամ գումար(109.1%):

Վարձակալական հողերի վարձը 2016 թվականի տարեվերջին կազմել է 1044.1 (174.0%) դրամ գումար, իսկ տեղական տուրքերը՝ 125.9 (46.6%) դրամ գումար, այլ ոչ հարկային եկամուտներ՝ 255.700 :

- Բյուջեի ծախսերը

Խորոնքի համայնքապետարանը 2016 թվականի ընթացքում կատարել են հետևյալ բյուջետային ծախսերը.

1. Համայնքապետարան՝

1.1 . Աշխատավարձ-	22.635.700	դրամ գումար
1.2. Պարգևատրում -	1.512.000	դրամ գումար
1.3. Էներգետիկ ծառ.-	1.261.100	դրամ գումար
գազ -	413.200	դրամ գումար
1.4. Կապի ծառայություն –	262.600	դրամ գումար
1.5. Ապահովագրական ծախսեր-	33.600	դրամ գումար
1.6. Գործուղում-	18.000	դրամ գումար
1.7. Համակարգչային ծառայություն-	291.200	դրամ գումար
1.8. Տեղեկատվական ծառայություն-	123.000	դրամ գումար

1.9. Ներկայացուցչական ծախսեր - հոդված՝ 4237 - 710.000 դրամ գումար,

որից՝	1.- մարտի 8-ի կապակցությամբ՝	300.000 դրամ գումար
	2.- վերջին դասի կապակցությամբ՝	200.000 դրամ գումար
	3. - մանկապարտ. ավագ և միջ. խմբ.՝	180.000 դրամ գումար
	4.- մանկ. աշնան հանդեսի նվերներ՝	30.000 դրամ գումար

1.10. Ընդհանուր բնույթի ծառ.- հոդված՝ 4239 - 1.524.400դրամ գումար,

որից՝	1.ծաղկեպսակ-	405.000 դրամ գումար
	2.դիակառքի ծառ.-	228.000 դրամ գումար
	3. Մայիսի 9-ի կապակց.	250.000 դրամ գումար
	4. Սարդարապատի հերոս.	200.000 դրամ գումար
	5.«Մաքուր ջուր»՝ ՍՊԸ՝	191.400 դրամ գումար
	6. Համայնք.աշխ. 2-օրյա հանգիստ -	250.000 դրամ գումար

1.11. Մասնագիտական ծառ.- հոդված՝ 4241 - 50.000 դրամ գումար
1.12. Գրասենյակային նյութեր- հոդված՝4261 - 400.000 դրամ գումար
1.13. Տրանսպորտային նյութեր- հոդված՝4264 - 1000.000 դրամ գումար
1.14. Հատուկ նպատակային նյութեր – հոդված՝ 4269 -1000.000 դրամ գումար
1.15.Վարչական սարքավորումներ – հոդված՝ 5122 - 87.000 դրամ գումար

2. Ընդհանուր բնույթի հանրային ծառ. – 1.730.000 դրամ գումար

որից՝ հոդված՝ 4237 - աման.նվերներ 980.000 դրամ գումար,

հոդված՝ 4239 - «Բերքի տոն»- 150.000 դրամ գումար

հոդված՝ 5112 - կանգառներ 600.000 դրամ գումար

3. Ճանապարհների նորոգում- 1.987.000դրամ գումար,

որից՝ հոդված՝ 4251 - 997.000 դրամ գումար,

հոդված՝ 5113 – 990.000 դրամ գումար,

4. Աղբահանում- 1.560.000 դրամ գումար

5. Ջրամատակարարում- 1.195. 700 դրամ գումար

որից՝ հոդված՝ 4239 - 400.000 դրամ գումար
հոդված՝ 4251 - 200.000 դրամ գումար
հոդված՝ 4269 - 200.000 դրամ գումար,
հոդված՝ 5122 - 395.700 դրամ գումար,

6. Փողոցների լուս. ընթացիկ նորոգում- - 300.000 դրամ գումար

որից՝ հոդված՝ 4251 - 150.000 դրամ գումար
հոդված՝ 4269 - 150.000 դրամ գումար,

7.Հանգիստ մշակույթ և կրոն - 7.294.600 դրամ գումար

որից՝ հոդված՝ 4111 - 6.294.600 դրամ գումար
հոդված՝ 5122 - 900.000 դրամ գումար,
որից՝ 1. - 800.000 դրամ գումար՝ բիլիարդի սեղանի ձեռք բերում,
2. - 100.000 դրամ գումար՝ 2 կիների և 2 նարդու ձեռք բերում,

8. Նախադպրոցական ուսուցում- 11.600.000 դրամ գումար

որից՝ հոդված՝ 4111 - 10.000.000 դրամ գումար
հոդված՝ 4267- 400.000 դրամ գումար
հոդված՝ 4269- 100.000 դրամ գումար
հոդված՝ 4212 – 300.000 դրամ գումար
հոդված՝ 4264- 100.000 դրամ գումար
հոդված՝ 4269- 200.000 դրամ գումար
հոդված՝ 5112- 500.000 դրամ գումար

9. Սոցանապահովներ- *3500.000 դրամ գումար*

10.Ոռոգում - *737.200 դրամ գումար*

- Ազգաբնակչություն

Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2937 մարդ: 2016 թվականի ընթացքում ծնվել է 36 և մահացել է 22 մարդ:
Ընտանեկան նպաստ ստացողների թիվը կազմում է 38 մարդ , թոշակառուները 228 մարդ:

- Կրթություն և գիտություն

Համայնքում գործում է մեկ դպրոց , որտեղ սովորում է 301 աշակերտ և գործում է մանկապարտեզ՝ 70 երեխայի հաճախումով և 15 աշխատակցով:

- Համայնքի հիմնախնդիրներ

ա. համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքամիջյան ճանապարհների նորոգումը,
բ. բնակավայրի (տնամերձների) ոռոգման ջրի համակարգի վերջնական կառուցումը՝ ներտնային համակարգի միացման աշխատանքները,
գ. համայնքի մյուս հատվածում խմելու ջրի համակարգի կառուցումը և անցկացումը բնակարաններ:
դ. վերանորոգման կարիք ունեն համայնքի մանկապարտեզը և մշակույթի տունը ,
ե. խիստ անհրաժեշտություն է դպրոցում սպորտդահլիճի կառուցումը:

Խորոնք համայնքի ղեկավար՝ /Ս. Նահապետյան/